ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/16-6>>

ք. Երևան 12.11. 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի, որը գործում է ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սահակյանշին >> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով (Այսուհետև Հավելված N 1) սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (5-րդ փուլ, 8-րդ մաս) աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2015 թվականի դեկտեմբերի 15-ը:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծա-նախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր միջոցներով մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և

անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N 5 Հավելվածում:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում սեփական հաշվին վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 30 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 133550148.0 (մեկ հարյուր երեսուներեք միլիոն հինգ հարյուր հիսուն հազար հարյուր քառասունութ) ՀՀ դրամ, որից 22258358 (քսաներկու միլիոն երկու հարյուրհիսունութ հազար երեք հարյուր հիսունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ի դիմաց պայմանագրի 5.1 կետում նշված համապատասխան չափաբաժնի գինն է:*

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինեին դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու

համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) նախնական կնքելու միջոցով:*

պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	<<Սահակյանշին>> ՓԲԸ
Հ/Հ 900011002343	Հասցեն՝ ք. Երևան,. Արարատյան 117/1
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02629081	Հ/Հ 1150000169370100
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ Ա. Արզումանյան	ՀՎՀՀ 02224769
	Տնօրեն՝. Ս. Սահակյան
(ստորագրություն)	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
<< 12 >> 11 2015թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/16-6 >> գնման պայմանագրի

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ

ԲԱՑՕԹՅԱ ՍՊՈՐՏՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՃԱՎԱԼԱԹԵՐԹ- ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Թենիսի հարթակներ				
	Դաշտի իրականացում				
1	Հողային պաստառի հարթեցում հանույթում	մ2	1450	140.453966	203658.25
2	III կարգի գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով	մ3	2610	609.923273	1591899.74
3	Հիմքի խտացում 5տ քաշով գլդոնով, 8 անցումով	մ3	2610	616.148853	1608148.51
4	Գրունտի ջրում	մ3	2610	283.905052	740992.18
5	Խճի շերտի պատրաստում Հմիջ=0.2մ տոփանումով	մ3	281.4	14768.328	4155807.51
6	Ե/բ սալերի տեղադրում B30 դասի բետոնից	մ3	213.71	72649.6238	15525951.11
7	Ամրան Φ12A500c	տ	24.57	505642.375	12423633.15
8	g/a շաղախի իրականացում h=80մմ	մ2	1556.2	3553.16341	5529432.90
9	Դաշտի տարածքի ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով տաք բիտումե մածիկի վրա	մ2	1407.0	4931.22455	6938232.94
10	Բետոնե մակերևույթի հղկում	մ2	1295.2	14705.2627	19046256.31
11	Ե/բ սալերի տեղադրում B30 դասի բետոնից 261m2	մ3	50.50	72649.6238	3668806.00
12	Ամրան Φ12A500c	տ	5.0451	505642.375	2551031.51
13	Բազրիքների պատրաստում և տեղադրում	գմ	75.000	53732.635	4029947.63
14	Բազրիքների ներկում, նախնական ներկում /75,0գմx15,14կգ/	տն	1.135	124290.698	141069.94

	<u>Ցանցի հենասյուների տեղադրում</u>				0.00
15	4-րդ կարգի բնահողի փորում ձեռքով	մ3	14.7	5094.32317	74886.55
16	Խճի շերտի փռում 20սմ հաստությամբ տոփանումով հենարանների տակ	մ3	4.86	14564.0798	70781.43
17	Բետոնե հիմքերի տեղադրում հենասյուների տակ B15 մակնիշի բետոնից	մ3	13.9	59090.5552	821358.72
18	Պողպատյա հենասյուների մոնտաժ 100x100x3մմ;C29 L=6մ	հատ	30.00	52645.0729	1579352.19
19	Պողպատյա հենասյուների ներկում, նախաներկում	մ2	72.000	4800.83765	345660.31
20	Մետաղական ձգալարի տեղադրում Φ5մմ	գ.մ	234	1453.46238	340110.20
21	Բետոնի լցնում հենասյան հիմքերին	մ3	0.300	49825.0685	14947.52
22	Օղակ Φ1սմ	հատ	60	72.2717933	4336.31
	<u>Լուսավորության հենասյուն</u>			0	0.00
23	4-րդ կարգի բնահողի փորում ձեռքով	մ3	18	5094.32317	91697.82
24	Պողպատյա հենասյուների մոնտաժ Φ159x4 L=12մ	հատ	12.00	140722.707	1688672.49
25	Պողպատյա հենասյուների ներկում, նախաներկում	մ2	71.890	4800.83765	345132.22
26	Խճի շերտի փռում 20սմ հաստությամբ տոփանումով հենարանների տակ	մ3	6.94	14564.0798	101074.71
27	Բետոնե հիմքերի տեղադրում հենասյուների տակ B22,5 մակնիշի բետոնից	մ3	17.52	69536.4312	1218278.27
28	Բետոնի լցնում հենասյան հիմքերին	մ3	0.240	49825.0685	11958.02
29	Ամրան Φ12A500c	տ	1.032	505642.375	521822.93
	Ե/բ աստիճաններ 9հատ				0.00
30	Գաբիոնի դեմոնտաժ	մ3	282	2217.75449	625406.76
31	Ե/բ աստիճաններ հիմքի խտացում 5տ քաշով գլդոնով, 8 անցումով	մ3	62.325	616.148853	38401.48
32	Գրունտի ջրում	մ3	62.325	283.905052	17694.38
33	Խճի շերտի պատրաստում Հմիջ=0.2մ տոփանումով	մ3	12.47	14768.328	184087.21
34	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12,5 դասի բետոնից h=10սմ	մ3	6.23	36854.5736	229603.99

35	Ե/բ միաձույլ աստիճանների պատրաստում B22.5 դասի բետոնից	մ3	69	96732.4627	6674539.93
36	Ամրան Ի12AIII	տ	0.26	505642.375	131467.02
	հենապատ L=77մ				0.00
37	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12,5 դասի բետոնից h=8սմ	մ3	6.16	39443.5226	242972.10
38	Բետոնե հենապատի իրականացում B20F200 դասի բետոնից	մ3	43.89	76212.6834	3344974.67
39	Ամրանի արժեքը A500c դասի	տն	2.772	505642.375	1401640.66
	<u>Ջրհոս խողովակների իրականացում</u>			0	0.00
40	4-րդ կարգի բնահողի փորում ձեռքով	մ3	35	5094.32317	178301.31
41	Բետոնե հիմքերի տեղադրում կիսախողավակների տակ B12,5 մակնիշի բետոնից	մ3	3.5	59442.6634	208049.32
42	Խճի շերտի փռում 10սմ հաստությամբ տոփանումով կիսախողովակի տակ	մ3	5.85	14564.0798	85199.87
43	Բետոնե ջրհոս վաք ЛР-60	մ3	6.95	177149.603	1231189.74
44	Ավտոաշտարակի տեղադրում	ժամ	45	7227.17933	325223.07
	ԸՆԴԱՄԵՆԸ				100303688.88
	Շահույթ 11%				11033405.78
	ԸՆԴԱՄԵՆԸ				111337094.66
	Ա.Ա.Հ 20 %				22267418.93
	ԸՆԴԱՄԵՆԸ				133604514

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011002343

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ

ՀՎՀՀ 02629081

ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ Ա. Արզումանյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Սահակյանշին>> ՓԲԸ

Հասցեն՝ ք. Երևան,. Արարատյան 117/1

<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ

Հ/Հ 1150000169370100

ՀՎՀՀ 02224769

Տնօրեն՝. Ս. Սահակյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 2
12. 11. 2015թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/16-6 >> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (5-րդ փուլ, 8-րդ մաս)
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
	ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (5-րդ փուլ, 8-րդ մաս) աշխատանքներ /Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ/			
1	Բացօթյա սպորտհրապարակների բարեկարգում	133550148.0	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց օրվանից:	Մինչև 2015 թվականի դեկտեմբերի 15-ը:
ԸՆԴԱՄԵՆԸ		**133550148.0**		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011002343
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ Ա. Արզումանյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Սահակյանշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան,. Արարատյան 117/1
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02224769
Տնօրեն՝. Ս. Սահակյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 3
<< 12 >> 11 2015թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/16-6 >> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2015 թ. դեկտեմբերի 25-ը	Ընդամենը Տարի
1	5112	ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (5-րդ փուլ, 8-րդ մաս) աշխատանքներ											133550148	133550148.0	**133550148.0**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011002343
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ Ա. Արզումանյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Սահակյանշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան,. Արարատյան 117/1
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02224769
Տնօրեն՝. Ս. Սահակյան

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 5

19 Նոյեմբերի _2015թ.

կնքված աշխատանքների կատարման

թիվ <<ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/16-6 >> գնման պայմանագրի

Կապալի օբյեկտում տեղադրվող և մոնտաժվող սարքավորումների և նյութերի երաշխիքային նվազագույն ժամկետները ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (5-րդ փուլ, 8-րդ մաս) աշխատանքների կատարման

Կապալի օբյեկտի շահագործման երաշխիքային ժամկետ				
հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1.	Պողպատյա խողովակ	մ	d= 159մմ	2 տարի
2.	Բետոն	$մ^3$	B7.5, B12.5, B20, B22.5, B30	2 տարի
3.	Պողպատյա խողովակ	հատ	100x100x3մմ	2 տարի
4.	Բետոնե ջրհոս	$մ^3$	վաք ЛР-60	2 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011002343
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ Ա. Արզումանյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Սահակյանշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան,. Արարատյան 117/1
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02224769
Տնօրեն՝. Ա. Սահակյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 4
<<_____>>_____2015 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/16-6 >> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

Կատարված աշխատանքների							
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
_____2015թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/16-6 >> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն